ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ
(ԵՀԱՀ)
ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԲԱԲԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՀԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բաբիականությունը, որը ծագեց Իրանում 19-րդ դարի 40-ական թվականներին, սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամի հետևանքով ստեղծված նպաստավոր պայմաններում լայնորեն տարածվեց և դարձավ 19-րդ դարի Իրանի ամենախոշոր կրոնական շարժումներից մեկը: Նրա առաջնորդը Սեյեդ Ալի Մոհամմադն (1819-1850) էր: Նա իրեն անվանում էր Բաբ, ինչն արաբերեն նշանակում է դուռ, դարպաս: Բաբն իր վարդապետության պատճառով ենթարկվել է հալածանքների և գնդակահարվել 1850թ. Թավրիզում:

Բաբի մահվանից հետո նրա գործը շարունակել է աշակերտներից Միրզա Հուսեյն Ալին (1817-1892), որն իրեն անվանել է Բահաուլլահ (արաբերեն նշանակում է Աստծո փառք) և դարձել նոր կրոնի անվանադիրը:

Բնականաբար, հարևան Իրանի հասարակական-քաղաքական-կրոնական կյանքը լայն արձագանք էր գտնում Հայաստանում և Անդրկովկասի հայության շրջանում: Հայ մեծանուն գրող Րաֆֆին, լինելով իրանահայ, առաջիններից մեկն է հետաքրքրվել Իրանում ծավալված կրոնական նոր ուղղությամբ: Նա դեռևս 1876թ. Թավրիզում գրած «Պարսկաստան»[1] հոդվածում է անդրադարձել բաբիականությանը: Րաֆֆին Պարսկաստանի կրոնական կյանքի մասին գրում է, որ Պարսկաստանում աղանդները «խիստ շատ են և նրանք ավելանում են օրեցօր»[2]: Նկարագրելով աղանդների էությունը, նա նշում է, որ «Պարսկաստանի մեջ աղանդների ոչնչանալը անհնարին է, որովհետև նրանք ժողովրդի բուն պահանջների արտահայտությունն են: Գուցե նորանք կկերպարանափոխվեն, բայց իրանց իսկությունը կորցնելու չեն»[3]: Իսկ բաբիականության մասին Րաֆֆին գրել է. «Բայց մի աղանդ, որ ավելի ուժ և զորություն է ստացել, չնայելով այն հալածանքներին, որ մինչև անգամ ինկվիզիցիան չի ունեցել իր զոհերի վերա - է բարիների աղանդը: Նորա հետևողներն ամեն քաղաքներում բազմացել են և ժողովրդի ավելի մտածող և ընդունակ մասն են կազմում»[4]:

Իրանի պատմության, հատկապես բաբիականության ուսումնասիրությամբ զբաղվել է նաև գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը, որը 1901թ. «Մուրճ» ամսագրում հրատարակած իր «Բաբիականութիւնը Պարսկաստանում»[5] հոդվածում ներկայացրել է բաբիականության ծագումը, վարդապետությունը, Սուրբ գրքերը և այլն: Հոդվածը նույն թվականին տպագրվել է նաև ռուսերեն[6]: Բաբիականությունն ու բահայականությունը ներկայացնելուց հետո, Առաքելյանն իր ուսումնասիրության վերջում հանգում է հետևյալ եզրակացությանը, որ «Բաբիութիւնը, հիմնուելով ալտրուիստ, մարդասէր և խաղաղասիրական գաղափարների վրայ, ոչ մի ընդհանուր բան չունի իսլամի հետ. թւում է թէ նա աւելի լաւ է համապատասխանում արիական պարսիկների խաղաղասէր, մեղմ բնաւորութեան և ձգտումներին: Նա կոչուած է լինելու Իրանի ապագայ կրոնը, և դա կը լինի մի մեծ բարեբախտութիւն այդ թշուառ երկրի համար»[7]:

Իրանում տեղի ունեցող ժողովրդական ապստամբություններն ու կրոնական նոր հոսանքի առաջացումն արձագանք են գտել նաև հայ գրականության մեջ: Գրող Մարգար Ավետիսյանը, որն ուսուցիչ է աշխատել Թեհրանի հայտնի Հայկազյան դպրոցում, 1904-1905թթ. հրատարակած իր «Կույր Բաբին»[8] և «Հալածանքի ծնունդը»[9] ստեղծագործությունների հերոսներ է ընտրել բաբիականների:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Երվանդ վարդապետ Տեր-Սինասյանը նույնպես հարկ է համարել իր «Կրոնների պատմութիւն»[10] (1909թ.) գրքի «Դավանական ճյուղավորություն և հերձվածներ իսլամի մեջ» գլխում համառոտ ներկայացնել բաբիականությունը և եզրակացրել, որ «Իսլամի մէջ ևս սկսուած են վերանորոգութեան փորձերն ու ձգտումները»[11]:

Հայ գրող, գիտնական և հասարակական գործիչ Ատրպետը բաբիականության և բահայականության վերաբերյալ իր ուսումնասիրությունները կատարել է Իրանում: Նա հայ իրանագիտության այն կարկառուն ներկայացուցիչներից է, որի՝ այս խնդրին վերաբերող աշխատությունները ժամանակին լայն ճանաչում են գտել ռուս արևելագետների շրջանում: Ատրպետի «Բաբի կամ Բեհայի»[12] գիրքը 1906թ. հրատարակվել է հայերեն, իսկ 1909թ. և 1910թ.՝ ռուսերեն:

Հայ անվանի պատմաբան Լեոն, որի գիտական բազմահարուստ ժառանգությունն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչև իր ապրած օրերը, նույնպես անդրադարձել է բաբիականությանն ու բահայականությանը. այդ թեմային նվիրել ծավալուն հոդվածաշար: Այն «Իրանի կեանքից, Յեղափոխական Իրանը, Բաբիականութիւն» վերնագրով տպագրվել է Թիֆլիսի «Հորիզոն» թերթի 1911թ. ինը համարներում[13]: Նշենք, որ հոդվածաշարը չի վերահրատարակվել Լեոյի ցարդ տպագրված հատորներում և. միգուցե. դա է պատճառը, որ այն վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից[14]: Լեոն բաբիականության մասին իր ուսումնասիրությունը գրել է իր ժամանակի արևելագետների աշխատությունների հիման վրա: Տպագիր աղբյուրներից օգտվելով նա հիմնախնդրի վերաբերյալ ուշագրավ եզրակացությունների է հանգել: Նա բաբիների շարժումը գնահատում է որպես համամարդկային նշանակության իրադարձություն. «Բարիների շարժումը... ունի և համամարդկային նշանակութիւն, իբրև գաղափարի առաջացրած յեղափոխութիւն, պսակված է արիւնով, հերոսութիւններով, նահատակութիւններով»[15]: Լեոն գրում է նաև Բաբի կրոնի էության, նրա սահմանած օրենքների և խնդիրների մասին, ինչպես նաև ընդհանրացնում է իր կարծիքը Իրանի նորաստեղծ վարդապետության մասին. «Դա յամենայն դէպս, մի մեծ նորութիւն էր Իրանի խաւար, լճացած կեանքի մէջ: Դա մի ուժեղ նոր խօսք էր, գրաւիչ իր թարմութեամբ, իր հայեացքներով, շեշտերով: ... Այնքան մեծ էր վերանորոգութեան կարօտը դժբախտ ժողովրդի մէջ»[16]:

Հայ նշանավոր լեզվաբան Հ. Աճառյանը տարիների իր դեգերումների ընթացքում հետազոտել է ոչ միայն լեզվաբանությանն առնչվող հարցեր, այլև՝ տեղական ժողովուրդների ազգագրությունն ու կրոնական հավատալիքները: Իր հավաքած խիստ արժեքավոր նյութերը նա ամփոփել է տարբեր հոդվածներում, դրանց անդրադարձել իր աշխատություններում, ինչպես նաև «Կյանքիս հուշերից»[17] հուշագրության մեջ, որից պարզվում է, որ մեծանուն գիտնականը հայ իրականության մեջ առաջիններից մեկն է ուսումնասիրել բահայականությունը[18], որի հետ սկզբնական ծանոթությունը եղել է Բաքվում, այնուհետև՝ 1919-ին, Թեհրանում: Աճառյանին հաջողվել է «մասնակցել նույնիսկ նրանց գլխավորների մասնավոր, գաղտնի,

դոնփակ նիստերին»[19]: Աճառյանի գնահատմամբ այս կրոնը. «Մի կարևոր օգուտ ունի. թողնելով այն կետը, որ նա մի քիչ եվրոպականություն է մտցնում մահմեդական աշխարհի մեջ, նա քանդում է մահմեդականության ուժը»[20]:

Ինչպես վկայում են հայ ուսումնասիրողներից բերված քաղվածքները, նախահեղափոխական շրջանում հայ գիտնականներն ու մտավորականները համակրանքով են հետևել հարևան Իրանի կրոնական զարգացումներին, հուսալով, որ մահմեդական ծովի մեջ գոյատևող հայության վիճակը զգալիորեն կթեթևանա կրոնների, ազգերի, մարդկանց և սեռերի հավասարություն, հումանիստական այլ գաղափարներ քարոզող նոր կրոնի հաղթանակով: Բռնի մահմեդականացման մշտական վտանգի մեջ ապրող հայության համար, հիրավի, հույսի շող էր ծագում Իրանում, քրիստոնեության և իսլամի միջև գցվում էր դեռևս երերուն մի կամուրջ, բայց նոր գաղափարների ծիլերը տրորվեցին ոչ միայն հենց Իրանում, այլև խորհրդային դարձած Անդրկովկասում, Միջին Ասիայում և Ռուսաստանում, որոնցում նույնպես բահայական համայնքներ էին ստեղծվել:

Բնականաբար, կոմունիստական վարչակարգում ապրող հայ գիտնականներից շատերը ևս աթեիստական քաբոզարշով սկսեցին բոլոր կրոնների, այդ թվում՝ բահայականության դեմ: Այսպես, Մոսկվայում 1930-31թթ. «Բեհայիզմ»[21] և «Բաբիզմ»[22] վերնագրերով ռուսերեն գրքեր է հրատարակում հայազգի գիտնական, բանասեր Արշալույս Արշարունին, որոնցում շեշտում է հակաբահայական մարքսիստական գրականության անհրաժեշտությունը: Նա նշում է, որ 1929թ. հակակրոնական քարոզչությանը նվիրված համամիութենական առաջին կուսակցական ժողովում Ադրբեջանի և Թուրքմենիայի պատվիրակները բողոքում էին, որ այդ կրոնն իրենց մոտ տարածված է նույնիսկ պրոլետարիատի մի մասին մոտ: Ա. Արշարունին, փաստորեն, գրել է ոչ թե անաչառ գիտական ուսումնասիրություններ, այլ հակակրոնական քարոզչական գրքեր, բայց դրանով հանդերձ, եթե ձերբազատվենք 1930-ականներին հատուկ նրա տերմինաբանությունից ու մոտեցումներից, կարելի է նրա գրքերից գիտականորեն հավաստի զգալի նյութ քաղել:

Հետագա տասնամյակներում բաբիականությանն ու բահայականությանն են անդրադարձել նաև մի շարք այլ հայ գիտնականներ և մտավորականներ:

Ժամանակակից հայ իրանագիտության. հատկապես բաբիականության և բահայականության ուսումնասիրության գործում իր կարևոր ներդրումն ունի Հ. Փահլևանյանը. որն իր հոդվածներով հայ ընթերցողին է ներկայացրել Իրանը 19-րդ դարի կեսերին փոթորկած բարիների ապստամբությունը և բահայիզմը[23]:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը թեև առանձին հոդվածով չի անդրադարձել բաբիականությանը. սակայն իր «Իրանի պատմություն»[24] (2005թ.) հիմնարար աշխատության մի գլուխը հատկացրել է Իրանում 19-րդ դարում մեծ թափ առած բաբիական շարժմանը:

Այսպիսով, հայ գիտնականներն այսօր էլ ուշադրությամբ են հետևում Իրանում տեղի ունեցող ոչ միայն քաղաքական, այլև կրոնական ոլորտի զարգացումներին ու փոփոխություններին, և մեր համոզմամբ, նրանցից ոմանց ուսումնասիրությունները տարբեր լեզուներով թարգմանվելու դեպքում կարող են մեծ հետաքրքրություն առաջացնել բաբիականությամբ և բահայականությամբ զբաղվող օտար գիտնականների շրջանում:

GOHAR VARDANYAN
(YHAU)

THE ARMENIAN AUTHORS ON BABISM AND BAHA'ISM

The Babi faith had its origins in Iran in the forties of 19th century. It grew and expended as a result of strong socio-economic crisis which appeared in Iran, until it became one of the largest religious movements 19th century in Iran.

Socio-political-religious life in Iran of 19th century found its wide echoes in Armenians of Armenia and Transcaucasia. Armenian famous writer Raffi (1835-1888), writer, publisist, public figure, "Mshak" - editor of newspaper H. Arakelyan (1855-1918), writer, scientist and public figure Atrpet (1860-1937), historian Leo (1860-1932), remarkable linguist Hr. Acharyan (1876-1953), philologist A. Arsharuni (1896-1985) and another Armenian scientists touched upon the subject of Bab'i and Baha'i faiths in their works. Thus, Armenian society was watchfully following developments and changes in political and religious life of neighboring Iran, and our all-rounder scientist found it essential to acquaint Armenian reader with dramatic Iranian history of Babism and Bahaism of last decades.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռաֆֆի. Երկերի ժողովածու. հատոր 10. Եր.. 1991. էջ 354:
2. Նույն տեղում. էջ 42:
3. Նույն տեղում. էջ 356:
4. Նույն տեղում. էջ 355:
5. Առաքելյան Հ.. Բաբիականուրիւնը Պարսկաստանում. «Մուրճ». Թիֆլիս. 1901. N 2. էջ 93:
6. Аракелян А. А., Бабизм, ИКОИРГО, Тифлис, 1901, с. 222.
7. Առաքելյան Հ.. Բաբիականութիւնը Պարսկաստանում. «Մուրճ». Թիֆլիս. 1901. N 2. էջ 103:
8. Ավետիսյան Մ.. Կույր Բաբին. Բաքու. 1904:
9. Մարգար. Հալածանքի ծնունդը. Ալեքսանդրապոլ. 1905:
10. Տեր-Մինասյան Ե.. Կրոնների պատմութիւն. Էջմիածին. 1909. էջ 262-271:
11. Նույն տեղում. էջ 271:
12. Ատրպետ. Իմամաթ. պատմական հետազոտութիւն. Բաբի կամ Բեհայի. Ալեքսանդրապոլ. 1906; Атрпет, Имамат, Историческое исследование, Александрополь, 1909; Атрпет, Бабиты и Бехаиты, Тифлис, 1910.
13. Լեո, Իրանի կեանքից, Յեղափոխական Իրան, Բաբիականութիւն, «Հորիզոն», Թիֆլիս, 1911, NN 184, 185, 192, 193, 195, 196, 200, 201, 208:
14. Վարդանյան Գ.. Լեոն բաբիականության և բահայականության մասին. Արևելագիտությանհարցեր. VI. Եր.. 2006. էջ 366:
15. Լեո, Իրանի կեանքից, Յեղափոխական Իրան, Բաբիականութիւն, «Հորիզոն», Թիֆլիս, 1911, N 184:
16. Նույն տեղում, N 185:
17. Աճառյան Հ.. Կյանքիս հուշերից. Եր.. 1967. էջ 379-386:
18. Վարդանյան Գ.. Հր. Աճառյանը՝ Պարսկաստանի կրոնական նոր ուղղությունների ուսումնասիրող, Երիտասարդ արևելագետների հանրապետական XX գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզեր. Եր.. 1999. էջ 35; Վարդանյան Գ.. Հր. Աճառյանը՝ բահայականության ուսումնասիրող (հուշագրության հետքերով). Երիտասարդ արևելագետների հանրապետական XXIII գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզեր. Եր.. 2002. էջ 65:
19. Աճառյան Հ.. Կյանքիս հուշերից. Եր.. 1967. էջ 380:
20. Նույն տեղում. էջ 386:
21. Аршаруни А. М., Бехаизм, М., 1930.
22. Аршаруни А. М., Бабизм, М., 1931.
23. Փահլևանյան Հ.. Բահայիզմը որպես իմպերիալիզմի գաղափարախոսություն. Իրանագիտության հարցեր. Եր.. 1978. էջ 41-47; Փահլևանյան Հ.. Բաբիների ապստամբությունը Իրանում XIX դարի կեսերին. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. XI . Եր.. 1982. էջ 90-119:
24. Բայբուրդյան Վ.. Իրանի պատմություն. Եր.. 2005. էջ 438-460: